

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/20»**

ք. Երևան

 2021թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հուսալի կամար» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Եթե պայմանագրի N 5 հավելվածով (Աղյուսակներ N 1 և N 2) կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի համար սահմանված երաշխիքային ժամկետների ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 25.500.000 (քսանհինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

²¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների այն մասի կատարումը, որոնց համար նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող, իսկ հետագա տարիներին մասով՝ օրացուցային տարվա առաջին աշխատանքային օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն

համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն
Կառավարության տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011037414
ՀՎՀՀ՝ 02507171

Գլխավոր քարտուղար՝ Վ. Գրիգորյան



ԿԱՏԱՐՈՂ

«Հուսալի Կամար» ՍՊԸ
ք. Սիսիան, գ. Տոլորս
«Հայթիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500990378803
ՀՎՀՀ՝ 09811047

Տնօրեն Վ. Առաքելյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	Ժամկետը
1	71351540/2	դրամ	25.500.000	1	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Չարենց փող. 14	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ
Տեխնիկական բնութագիրը						
1	Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը					
	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ խորհրդատվական ծառայության մատուցում՝ <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման, ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանի, ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն հրամանի համաձայն					
2	Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը					
	Կից ներկայացվող Ծավալաթերթով նախատեսված աշխատանքներ					
3	Տեխնիկական առաջադրանք					
	Տեխնիկական հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների համաձայն (Հավելված N 4)					
	Առանձին տեսակի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և կատարողական ակտերի ներկայացման ապահովում հիմնական լիցենզիային կից ներկայացվող ներդիրներում ընդգրկված մասնագետների միջոցով և գրավոր հաստատմամբ՝ ճարտարագետ-շինարարի, ճարտարագետ-էլեկտրիկի և ճարտարագետ-հիդրոտեխնիկի կողմից՝ յուրաքանչյուր իր կողմից վերահսկման ենթակա շինաշխատանքների համար					
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին					
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում					
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում					
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում, ամենամսյա հաշվետվությունների ներկայացում: Ընդ որում, առանձին տեսակի շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունը մատուցվում է պատասխանատու անձանց՝ համապատասխան որակավորմամբ մասնագետ-հսկիչների կողմից:					

<p>1. Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի ամենօրյա ռեժիմով՝ շինարարական հրապարակում պատասխանատու անձանց անմիջական մասնակցությամբ:</p> <p>2. Օբյեկտի ինժեներական համակարգերի կառուցման նկատմամբ հսկողությունը պետք է իրականացվի հաստատված նախագծով նախատեսված տեխնոլոգիական հաջորդականությանը համապատասխան և տվյալ աշխատանքների համար սահմանված ժամանակահատվածում:</p> <p>3. Օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության կազմակերպությունը (պատասխանատու- հսկիչը, խորհրդատուն) պետք է սեփական ռեսուրսների և միջոցների հաշվին, համաձայն լաբորատոր փորձարկումների պլանի, իրականացնի կառուցվող օբյեկտի բոլոր կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի (այդ թվում սարքավորումների, համակարգերի, ցանցերի և սարքերի) նմուշառումները և լաբորատոր փորձարկումները, ինչպես նաև ապահովի դրանց արդյունքների ներկայացումը Պատվիրատուին՝ ամսական հաշվետվությունների և/կամ շինարարական ակտերի հետ ներկայացվող առանձին հաշվետվությունների տեսքով: _ Լաբորատոր փորձարկումների քանակը, ձևերը և մեթոդաբանությունը պետք է իրականացվեն համաձայն պատվիրատուի պահանջի և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի: _ Նշված փորձարկումները պետք է ապահովվեն տվյալ օբյեկտի համար նախատեսված փորձարկման ենթակա աշխատանքների և առանձին տեսակի նյութերի ամբողջ ծավալը:</p> <p>4. Օբյեկտի ավարտից հետո՝ խորհրդատուն պետք է ներկայացնի շինաշխատանքների ամբողջ ընթացքի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն և եզրակացություն այն մասին, որ օբյեկտը կառուցվել է ՆՆՓ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:</p>	
Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում	
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
Շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը	Շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն
 Կառավարության տուն 3
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ՝ 900011037414
 ՀՎՀՀ՝ 02507171

Գլխավոր քարտուղար Վ. Գրիգորյան



ԿԱՏԱՐՈՂ

«Հուսալի Կամար» ՍՊԸ
 ք. Սիսիան, գ. Տոլորս
 «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
 Հ/Հ՝ 11500990378803
 ՀՎՀՀ՝ 09811047

Տնօրեն Վ. Առաքելյան



Հավելված N 2
 2021թ. կնքված
 «ՀՀ ԱՆ ԳՇԾԲ-2021/20» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

		Ծառայության						ՀՀ դրամ
		դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ուվիսպ	ոստոսոսո	վճարվող	վճարվողիսպ	վճարվողսո	Ընդամենը
1	71351540/2	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	4.025.000	4.025.000	4.025.000	4.025.000	4.025.000	4.025.000
								4.025.000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախաբեռնվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


Առողջապահության նախարարություն
 Կառավարության տուն 3
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ՝ 900011037414
 ՀՎՀՀ՝ 02507171



ԿԱՏԱՐՈՂ

«Հուսալի Կամար» ՍՊԸ
 ք. Սիսիան, գ. Տոլորս
 «Հայրիզնեբրանկ» ՓԲԸ
 Հ/Հ՝ 11500990378803
 ՀՎՀՀ՝ 09811047

Տնօրեն Վ. Առաքելյան



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Ծառայության մատուցման մեթոդաբանություն

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Ծառայության մատուցման նկարագիրը
1	2	
1	Հողային աշխատանքներ	1. Բնապահպանական և շրջակա միջավայրի նորմերի պաշտպանում և ճիշտ իրագործում: 2. Հողային աշխատանքների կատարումից հետո առանցքների նշահարման ակտի ձևակերպում համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների կողմից: 3. Բացված խրամուղիների գրունտների կարգի որոշում: 4. Տեղափոխվող գրունտների ծավալների և քանակությունների հաշվեգրում 5. Բացումներից հետո երկրաբանական կազմակերպության կողմից հիմնատակի գրունտների կատեգորիայի որոշում համապատասխանությունը նախագծային լուծումներին 6. Հետադարձ լիցքի տոփանում ըստ գործող նորմերի: Այնուհետև տոփանված գրունտների խտությունների որոշում հորատման միջոցով:
2	Բետոնային աշխատանքներ	1. Բետոնային աշխատանքների կատարման ժամանակ բետոնի կազմի ճիշտ ընտրություն: 2. Բետոնացման աշխատանքների կադապարների տեղադրման համար համապատասխան փայտանյութի ճիշտ ընտրություն: 3. Բետոնի պաշտպանիչ շերտի ապահովում: 4. Բետոնացման աշխատանքների կատարման ժամանակ խորանարդիկների պատրաստում 150*150*150մմ չափորոշիչների համաձայն: 5. Բետոնի տեղակայում թրթռացման միջոցով: 6. Ըստ ժամանակաշրջանի բետոնի խնամքի իրագործում: 7. Ըստ գործող նորմերի բետոնի սեղմման ամրության որոշում 7 և 28-օրյա ժամկետում կգ/սմ ² : 8. Անհրաժեշտության դեպքում որոշում բետոնի F սառնակայունության և W ջրաթափանցիկության գործակիցների որոշում: 9. Ձմռանը բացասական աստիճանի դեպքում բետոնային աշխատանքների ավարտից հետո պաշտպանում ցրտահարությունից: 10. Ավարտված աշխատանքներից հետո բետոնի դասի ստուգում ոչ քայքայիչ մեթոդով:
3	Ամրանային աշխատանքներ	1. Ամրանների դասի ճիշտ ընտրություն ու համապատասխանությունը նախագծային ու շին. նորմերի պահանջներին: 2. Կառույց ընդունված ամրանների փորձարկման արդյունքների եզրակացություն ըստ ձգման և ծռման: 3. Անուրների քայլերի ճիշտ տեղադրում և ամրացում ամրաններին: 4. Արմոկարկանների համար բետոնի պաշտպանիչ շերտի ապահովում: 5. Անհրաժեշտության դեպքում ժանգի մաքրում ամրաններից: 6. Եռակցված տարրերի ճիշտ իրագործում և ստուգում համապատասխան ռենտգենյան սարքավորումների միջոցով (կան այլ

		<p>տարբերակներ)</p> <p>7.Ներդիր էլեմենտների հակակոռոզիոն մշակում կոռոզիայի դեմ:</p> <p>8.Արմոկարկասների միացման հանգույցների ճիշտ տեղադրում ըստ գործող նորմերի:</p> <p>9.Անուրների և ամրանների կցվածքների ճիշտ ուղղորդված տեղադրում:</p> <p>10.Հեծանների, սյուների միացման հանգույցների, ներդիր էլեմենտների տեղադրման աշխատանքների ուսումնասիրություն համապատասխանությունը գործող նորմերին:</p>
4	Քարի շարվածք	<p>1.Քարային աշխատանքների կատարումից հետո պահպանությունը ձմեռային ցրտահարումներից ըստ գործող նորմերի:</p> <p>2.Ապահովել «Միդիս» տիպի շարվածքի ճիշտ իրականացում:</p> <p>3.Կանոնավոր քարե շարվածքի իրականացման ժամանակ ապահովել լայնադիրների և երկայնադիրների ճիշտ տեղադրում ցեմենտային շաղախով, դասի շարժունակության և կարանների ճիշտ իրագործում:</p> <p>4.Քարային աշխատանքները սկսելուց առաջ քարերի մաքրում փոշուց և այլ կեղտերից ու ջրավազում:</p> <p>5.Քարերի դասի ճիշտ ընտրություն ըստ կարգի:</p> <p>6.Շարվածքի ամրանավորված ցանցերի ճիշտ տեղադրում ու խարսխում արմոկարկասների հետ:</p> <p>7.Սրբատաշ քարերի գույնի ճիշտ ընտրություն: Քարերի նիստերի չափորոշիչների ապահավում հաջորդական քարերի տեղադրման ժամանակ:</p>
5	Հարդարման աշխատանքներ	<p>1. Սվաղային աշխատանքների կատարման ապահովում ըստ նախագծային աշխատանքների (հասարակ, բարելավված կամ բարձրակարգ)</p> <p>2. Ներկարարական աշխատանքների իրագործում ըստ նախագծային լուծումների:</p> <p>3. Հատակների տեղադրվող նյութերի (սալիկներ, փայտյա էլեմենտներ և այլն) որակը, գույնը արտադրող երկիրը համաձայնեցնել պատվիրատուի հետ:</p> <p>4. Աշխատանքներն ընդունել ըստ գործող կարգի և նորմատիվ չափորոշիչների դրույթների համաձայն:</p> <p>5. Ներքին հարդարման աշխատանքները պետք է ունենան գեղագիտական տեսք:</p>
6	Ինժեներական ցանցեր	<p>1.Էլեկտրական հաղորդալարերի ճիշտ և ըստ նոմենկլատուրայի տեղադրման աշխատանքների իրագործում:</p> <p>2.Բաժանիչների, վարդակների, անջատիչների տեղադրում ըստ նախագծային և գործող նորմերի համաձայն և ընդունում:</p> <p>3.Արտաքին մալուխների և հոսքագծերի իրագործում ըստ տրված պատվիրատուների կողմից տրված պայմանների համաձայն:</p> <p>4.Ներքին հոսքագծերի անցկացում (ջրամատակարարում, կոյուղագծեր, ջերմային ցանցեր, օդափոխություն) ըստ նախագծային լուծումների և գործող նորմերի համաձայն:</p> <p>5.Փորձարկման աշխատանքների հանձնում և ընդունում տեղ գտած թերությունների վերացում:</p> <p>6.Արտաքին ինժեներական ցանցերի կատարման համապատասխանությունը նախագծային լուծումների համաձայն:</p> <p>7.Հողային աշխատանքների կատարման ժամանակ շահագրգիռ կազմակերպությունների կողմից պետք է տրվի համապատասխան տեղեկանքներ, հողի տակ գտնվող կոմունիկացիաների տեղակայման վերաբերյալ:</p>
7	Ասֆալտաբետոն	<p>1.Ասֆալտբետոնի ծածկույթի հողային պաստառի ընդունում:</p> <p>2.Խճապակազային շերտի տեղադրում ըստ նորմերի խճային հիմքի իրականացում ըստ տրված ֆունկցիաների:</p> <p>3.Ասֆալտային պաստառի իրականացում (մանրահատիկ,</p>

		ավագամանրահատիկ, խոշորահատիկ): 4. Իրականացված աշխատանքների ընդունում: 5. Նմուշների լաբորատոր փորձարկումների ընդունում և ստուգում համապատասխանությունը իրագործված աշխատանքների կատարմանը:
8	Փորձարկումներ և հսկողության գրաֆիկ	Ներկայացվում է ստորև
9	Աշխատանքների ընդունում	Շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները

8. Փորձարկումներ և հսկողության գրաֆիկ

Բետոններ

Հ/Հ	Փորձարկման ԱՆՎԱՆՈՒՄԸ	Փորձարկ. հիմնավ.	Наименование работ /Անվանում	Չ/Մ /Ед.и зм.	Ծավալ	Ընդհանուր պարտիա (1 պառտիա և 6 փորձանմուշ է)
1	Սեղման ամրություն (10 x10 x 10 սմ, 15 x15 x 15 սմ խորանարդ, 15 x 30 սմ գլան և այլն)	ГОСТ 10180-2012	Ե/բետոնե հիմնային հեծանի իրականացում B20 բետոնով У-во ж/б фундаментных балок B20	մ3 մ3	95,4	5
2	Սեղման ամրություն (10 x10 x 10 սմ, 15 x15 x 15 սմ խորանարդ, 15 x 30 սմ գլան և այլն)	ГОСТ 10180-2012	Ե/բետոնե միաձույլ հատակի սալի իրականացում -0,05 նիշում B12,5 բետոնով У-во ж/б плит B12,5	մ3 մ3	154,2	8
3	Սեղման ամրություն (10 x10 x 10 սմ, 15 x15 x 15 սմ խորանարդ, 15 x 30 սմ գլան և այլն)	ГОСТ 10180-2012	Ե/բետոնե միաձույլ աստիճանի իրականացում B25 բետոնով У-во ж/б лестниц монолитных B25	մ3 մ3	3,83	1
4	Սեղման ամրություն (10 x10 x 10 սմ, 15 x15 x 15 սմ խորանարդ, 15 x 30 սմ գլան և այլն)	ГОСТ 10180-2012	Ե/բետոնե սյան իրականացում B25 բետոնով Ж/б колонна B25	մ3 մ3	70	4
5	Սեղման ամրություն (10 x10 x 10 սմ, 15 x15 x 15 սմ խորանարդ, 15 x 30 սմ գլան և այլն)	ГОСТ 10180-2012	Ե/բետոնե պարզունակի իրականացում B25 բետոնով Ж/б ригель B25	մ3 մ3	203,1	10
6	Սեղման ամրություն (10 x10 x 10 սմ, 15 x15 x 15 սմ խորանարդ, 15 x 30 սմ գլան և այլն)	ГОСТ 10180-2012	Սալի ուժեղացում թեթև բետոնով B20 Усиление плиты из легкого бетона	մ3 մ3	92,2	5
7	Սեղման ամրություն (10 x10 x 10 սմ, 15 x15 x 15 սմ խորանարդ, 15 x 30 սմ գլան և այլն)	ГОСТ 10180-2012	Ե/բետոնե ծածկի սալի իրականացում բետոնով B25 Ж/б плиты перекрытия B25	մ3 մ3	217,4	11

8	Սեղման ամրություն (10 x10 x 10 սմ, 15 x15 x 15 սմ խորանարդ, 15 x 30 սմ գլան և այլն)	ГОСТ 10180-2012	Ե/բետոնե հորանի իրականացում B25 բետոնով Ж/б шахта B25	մ3 մ3	17,7 7	1
9	Սեղման ամրություն (10 x10 x 10 սմ, 15 x15 x 15 սմ խորանարդ, 15 x 30 սմ գլան և այլն)	ГОСТ 10180-2012	Ե/բետոնե հենապատի իրականացում B20 բետոնով У-во ж/б подпорных стен	մ3 մ3	9,9	1

Ամփոփում / Ամրաններ /

Հ/Հ	ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Փորձարկ. հիմնավ.	Наименование работ /Անվանում	Չ/Մ /Է.ձ.և ՅՄ.	Ծավալ	Նմուշառում յուրաքանչյուր 20 տ խմբաքանակից ըստ տրամագծի
1	Խզման ժամանակավոր դիմադրություն, d=22, 25 մմ	ГОСТ 12004-81	Арматура А500с/Ամրան А 500с	т/տ	66,8 15	6
2	Խզման ժամանակավոր դիմադրություն, d=16, 20 մմ	ГОСТ 12004-82	Арматура А240/Ամրան А 240с	т/տ	23,5 66	3

**Էլեկտրատեխնիկական մաս
Электротехническая часть**

Հ/Հ	ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Փորձարկ. հիմնավ.	Наименование работ /Անվանում	Չ/Մ /Է.ձ.և ՅՄ.	Ծավալ	Փորձարկում, յուրաքանչյուր խմբաքանակից ըստ տրամագծի
1	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 3*1,5 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика	զծմ пм	1240	1
2	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 3*2,5 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика	զծմ пм	788 0	1
3	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 3*4 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика	զծմ пм	1885	1
4	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 3*6 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика	զծմ пм	425	1

5	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 4*2,5 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика	զծմ пм	75	1
6	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 5*2,5 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика	զծմ пм	235	1
7	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 5*4 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика	զծմ пм	200	1
8	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 5*6 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика	զծմ пм	435	1
9	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 5*10 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика	զծմ пм	65	1
10	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 5*16 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика	զծմ пм	100	1
11	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 5*50 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика ВВГНГ LS 5*50 мм2	զծմ пм	8	1
12	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 4*35 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика ВВГНГ LS 4*35 мм2	զծմ пм	11	1
13	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 3*35 мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика ВВГНГ LS 3*35 мм2	զծմ пм	3	1
14	Մալուխի մեկուսիչի էլեկտրական դիմադրության որոշման մեթոդ, հաղորդիչի հաստատուն լարման ժամանակ	ГОСТ 3345-67	Պղնձե մալուխի մոնտաժում ВВГНГ LS 3(1*185) мм2 Кабель с медными жилами с изоляцией из негорючего пластика ВВГНГ LS 3(1*185) мм2	զծմ пм	3	1
15			Մալուխ ստուգիչ 4G 1,5 мм2 Кабель контрольный	զծմ пм	90	

**Արևային ֆոտովոլտային
համակարգ
Солнечная станция**

Հ/Հ	ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Փորձարկ. հիմնավ.	Наименование работ /Անվանում	Չ/Մ /Էդ.и зм.	Ծավալ	Փորձարկում, յուրաքանչյուր խմբաքանակից ըստ տրամագծի
1	Մալուխի պղնձե և ալյումինե ջղեր	ГОСТ 22483-77	ВВГ 4*6մմ2 մալուխի մոնտաժում Медный кабель ВВГ 4*6мм2	զծմ мм	90	1
2	Մալուխի պղնձե և ալյումինե ջղեր	ГОСТ 22483-77	ВВГ 4*25մմ2 մալուխի մոնտաժում Медный кабель ВВГ 4*25мм2	զծմ мм	30	1
3			հողանցում заземление			
4	Մալուխի պղնձե և ալյումինե ջղեր	ГОСТ 22483-77	Պղնձե հաղորդալար հողանցման Медный провод заземления ПВ 1*4մմ2	զծմ мм	55	1
5	Մալուխի պղնձե և ալյումինե ջղեր	ГОСТ 22483-77	Պղնձե հաղորդալար հողանցման Медный провод заземления ПВ 1*6մմ2	զծմ мм	10	1
6	Մալուխի պղնձե և ալյումինե ջղեր	ГОСТ 22483-77	Պղնձե հաղորդալար հողանցման Медный провод заземления ПВ 1*10մմ2	զծմ мм	65	1
7	Մալուխի պղնձե և ալյումինե ջղեր	ГОСТ 22483-77	Պղնձե հաղորդալար հողանցման Медный провод заземления ПВ 1*35մմ2	զծմ мм	30	1

**ԳՐՈՒՆՏՆԵՐ (ГОСТ 25100-2011,
ГОСТ 30491-2012)**

Հ/Հ	ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Փորձարկ. հիմնավ.	Наименование работ /Անվանում	Չ/Մ /Էդ.и зм.	Ծավալ	Ընդհանուր պարտիա
1	Նմուշառում, նմուշների փաթեփավորում, պահպանում, փոխադրում	ГОСТ 12071-2014	Обратная засыпка /Բնահողի հետ լիցք	մ3 մ3	2471,6	3 նմուշ
2	Առավելագույն խտություն, ջրի օպտիմալ պարունակություն	ГОСТ 22733-2002	Обратная засыпка /Բնահողի հետ լիցք	մ3 մ3	2471,6	1 փորձարկում
3	Տեղում փաստացի խտության որոշում կտրող օդակով	ГОСТ 5180-2015	Обратная засыпка /Բնահողի հետ լիցք	մ3 մ3	2471,6	1 տեղամաս

4	Գրունտի կրողունակություն, դինամիկ բեռնում	ASTM E2835	Обратная засыпка /Բնահողի հետ լիցք	մ3 մ3	2471 ,6	1 տեղամաս
---	---	------------	------------------------------------	----------	------------	--------------

ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆ

Յուրաքնչյուր պարտիայի նմուշը կախված է ամենամեծ հատիկի չափերից ГОСТ 12801-98
Յուրաքնչյուր 7000 քմ համար, երեք նմուշ ГОСТ 9128-84

Հ/Հ	ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Փորձարկ. հիմնով.	Наименование работ /Անվանում	Չ/Մ /Ед.и зм.	Ծավալ	Ընդհանուր պարտիա
1	Նոր պատրաստված ասֆալտի նմուշառում	ГОСТ 12801-98	Ա/բետոնե շերտի իրականացում մանրահատ Ա տիպի Мелкозернистый асфальт	մ2 մ2	629 9,5	2 (կետնի քաշը ոչ պակաս 2 կգ, 70 մմ)
2	Սեղմման ամրության սահման (50oC, 20oC, 0oC)	ГОСТ 12801-98	Ա/բետոնե շերտի իրականացում խոշորահատ Крупнозернистый асфальт	մ2 մ2	562 8	1 (կետնի քաշը ոչ պակաս 6 կգ, 100մմ)
3	Հորատված ասֆալտբետոնի շերտի հաստության որոշում, ամրության որոշում, կետն	ГОСТ 9128-84	Ա/բետոնե շերտի իրականացում մանրահատ Ա տիպի Мелкозернистый асфальт	մ2 մ2	629 9,5	1
4	Ասֆալտի որակի և ամրության որոշում կետնի ցուցմունքով	ГОСТ 9128-84	Ա/բետոնե շերտի իրականացում խոշորահատ Крупнозернистый асфальт	մ2 մ2	562 8	1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն
Կառավարության տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011037414
ՀՎՀՀ՝ 02507171

Գլխավոր քարտուղար՝ Վ. Գրիգորյան



ԿԱՏԱՐՈՂ

«Հուսալի Կամար» ՍՊԸ
ք. Սիսիան, գ. Տոլորս
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11500990378803
ՀՎՀՀ՝ 09811047

Տնօրեն Վ. Առաքելյան



Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի նվազագույն պահանջներ

Աղյուսակ N 1

Հ/Հ	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր և սարքավորումներ	Նախագծողի կոմից սահմանված նվազագույն շահագործման երաշխիքային ժամկետ /տարի/
1	2	3
1	Շենքի կրող կոնստրուկցիաների շահագործման հաշվարկային ժամկետ	50
	Հարդարման աշխատանքներ	
2	Այլումինե ճոճվող դռներ ապակեփաթեթով	5
3	Փայտե դռներ	5
4	Այլումինե պատուհաններ, ապակեփաթեթով, ջերմակամրջակով	5
5	Մամլագրանիտե հատակներ	20
6	Վինիլային հատակներ	20
7	Լատեքսային ներկում /այդ թվում՝ հակաստատիկ/	5
8	Արտաքին պատերի ջերմամեկուսիչ 100մմ հաստության երկշերտ (վերին շերտը՝ 30մմ, ստորինը՝ 70մմ հաստության) բազալտե մանրաթելային սալեր	50
9	Արտաքին պատերի ֆիբրոցեմենտե սալեր	15
10	Արտաքին պատերի տուֆե /տրավերտինե/ սալեր	25
	Տանիք	
10	Տանիքի ջերմամեկուսիչ շերտ 100մմ հաստությամբ երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ) չայրվող բազալտե հանքաքամաքակե սալեր	50
11	Տանիքի երկշերտ ջրամեկուսիչ գորգ (երկրորդ շերտի վերին շերտը ավագե թաղանթով)	25
12	Տանիքածածկույթ 0.5մմ հաստությամբ գունավոր ց/պրոֆիլավոր թիթեղից /մետաղական կղմինդր/	25
	Սառը ջրամատակարարման ներքին ցանց	
21	Ծորակ-խառնիչներ ցնցուղով եւ ճկուն խողովակով	2
22	Լվացարանի արմունկային ծորակ-խառնիչներ	2
	Կոյուղու ներքին ցանց	
23	Լվացարաններ սիֆոնով, ճկուն միացումով եւ պատվանդանով	5
24	Բժշկական լվացարաններ սիֆոնով, չժանգոտվող մետաղից 700x1500x850մմ	5
	Տանիքում ջրահեռացման խողովակների հակասառցման համակարգ	
25	Ջերմակարգավորիչ ջերմաստիճանի տվիչով լարի վրա DEVIREG 316	5
26	Մոդուլային էլեկտրամագնիսական թողարկիչ, ջերմային ռելեով, 2 կոճակով 200Վ, 10Ա	5
27	Մալուխ բարինայով (1հատը՝ 20մ) DTCE - 30 DEVI snow™ 30T	5
	Հրդեհային ազդարարման համակարգ	
28	Հրդեհային ազդանշանման ստուգման և ղեկավարման վահանակ	2
29	Պահուստային սնուցման բլոկ	2
30	Ընդունող-ստուգող պահակահրդեհային սարք 20 ուղղությամբ	2
31	Հրդեհային-ծխային ազդասարք	2
32	Հրդեհի ձեռքի ազդասարք	2
33	Ազդարարիչ պահակա-հրդեհային, լուսածայնային Маяк-12-К	2
	Պահակային ազդանշանման համակարգ	
36	Պահակային ազդանշանման վահանակ, 4 գոտի, GSM մոդուլ	2
37	Պասիվ ծավալային տվիչ	2
38	Մագնիսական տակտային տվիչ	2
39	Ազդարարիչ պահակա-հրդեհային, լուսածայնային	2

	Կոմունիկացիոն համակարգ	
40	Միջին հզորության ԱՀԿ IPATC YEASTAP S100 առավել, հզորությունը 16 արտ, և 200 ներքին զծեր	1
41	Կոմունիկացիոն պահարան 19" 41U, 800x800մմ չափսի	1
42	Համակցման վահանակ Patch Panel 50 պորտով	1
43	Համակցման վահանակ /patch panel 19", UTP, 24xRJ45, cat. 5e	1
44	Անխափան սնուցման սարք UPS 1500VA	1
	Տեսահսկում	
45	Մոնիտոր 22", FHD	5
46	Ցանցային տեսաձայնագրիչ 64 կանալի, 8 մուտքային HDD բնիկով	5
47	Հիշող սարք HDD 8TB	5
	Քույրի կանչի համակարգ	
48	Կենտրոնական վահանակ, լրակազմ	3
	TV համակարգ	
49	Թվային ալեխավաք հեռուստատեսային, ուժեղացուցիչով	5
	Սառը ջրի մատակարարման ներքին ցանց	
50	Ցնցուղի ծորակ-խառնիչ	2
51	Լվացարանի ծորակ-խառնիչ	2
52	Խոհանոցակոնքի ծորակ-խառնիչ	2
53	Ջրառման ծորակ Փ15մմ	2
	Էլեկտրալուսավորում	
54	Պահարան դռնակով - 1115x655x215մմ ՉԱՓՍԵՐԻ	5
55	Վահանակ 12 մոդուլի	2
56	Վահանակ 24 մոդուլի	2
57	Հոսանահատիչ եռաֆազ 400Ա հոսանքի ВНК-37-1 3П 400А	2
58	Լուսատու մակադիր 1100x150- 30Վտ -LED - IP65	1
59	Լուսատու մակադիր կլոր-9Վտ-LED-IP65	1
60	Լուսատու մակադիր 300x300- 21Վտ -LED - IP44	1
61	Լուսատու ներսարքված 600x600- 30Վտ -LED - IP44	1
62	Լուսատու մակադիր ներսարք.մարտկոցով - 8Վտ -LED	1
63	Ելքի LED նշան ներկառուցված մարտկոցով «Exi» 5Վտ	2
64	Լուսատու LED կարմիր «Չմոնեյ» նշանով 5Վտ	2
65	Նույնը, վթարային, ակումուլյատորային մարտկոցով LED լուսատու 33վտ, 3600Lm, IP40, 4000K	2
66	Լուսադիողային էվակուացիոն լուսատու Ձևը ուղղանկյուն (328x51մմ) ներկառուցված մարտկոցով 18Վտ	1
67	Էվակուացիոն լուսատու ներկառուցված մարտկոցով, 1x8Վտ հզորության (1.5-2 ժամ), ուղղության ցուցանակե նշանակմամբ	1
	ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆ	
68	Ավտոմատացված ջրային կաթսա ECOMAX /համարժեք/ Q=846 կՎտ(727560կկալ /ժամ) ջերմարտադրող	3
69	Տաք ջրամատակարարման թերթավոր ջրատաքացուցիչ Q=900000կկալ/ ժամ /համարժեք/	3
70	Ընդարձակման բաք VRV / համարժեք / V= 1000լ	5
	Գազամատակարարում	
71	Գազի ազդանշանային սարք	1
	Հեղուկ վառելիքի մատակարարում	
72	Հեղուկ վառելիքի պահուստային բաքի տեղադրում	1
	Էլեկտրամատակարարում	
73	Հատիչ 2 ուղղության համար 380Վ 80Ա ABB OT80F3C	1
74	Մագնիսական թողարկիչ, ջերմային ռելեյով, կառավարման կոճակներով, 380Վ,10Ա	1
	Տարածքի արտաքին լուսավորություն	
75	Կոնսոլային լուսարձակ 56...60Վտ, լույսի սպեկտրը (4000...5000K) պաշտպանվածության դասը IP65	1
76	Ջերմային ռելե, կարգավորման միջակայք 17...25Ա	1
77	Լույսային ինդիկատոր, ~230...240Վ	1
	Բարեկարգման աշխատանքներ	

78	Ասֆալտբետոնե ծածկույթի շահագործման երաշխիքային ժամկետ	5
Արեային ջրատաքացուցիչ համակարգ		
79	Ընդարձակման բաք V=40լ	5
80	Դրենժ բաք չժանգոտվող պողպատից V=60լ	5
81	ԲոյլերBSV-1000, V=1000 լժ	5
Արեային Ֆոտովոլտայիկ կայան		
82	ԵՌԱՖԱՁ ՓՈԽԱԿԵՐՊԻՉ 55կՎտ ՀՁՈՐՈՒԹՅԱՄԲ (Պաշտպանվածություն՝ DC և AC մուտքերի գերլարումներից, գերբեռնվածության, Y30, հակառակ բևեռայնություն, մեկուսացման հսկում, RS485, USB ինտերֆեյս, LED էկրան, -25'...+60°C աշխատանքային ջերմաստիճան, IP65, EN / IEC 62109-1, EN / IEC 62109-2)	1

Կապալի օբյեկտի սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ

Աղյուսակ N 2

N	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ	Նախագծողի կոմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ
1	2	3
	Օդորակման համակարգ	2
1	Ինվերտորով օդորակիչ Սառ. =5կՎտ	2
2	Ներածում-արտածում Breezart 6000 Aqua RP PBտիպի թիթեղային ռեկուպերատոր, ջրատաքացուցիչի ջրի մատակարարման հանգույցով, ավտոմատ համակարգով Ստ=23կՎտ H=600Պա չափ. 3450x1250x1590(հ)մմ	2
3	Ներածում-արտածում Breezart 3700 Aqua RP PBտիպի թիթեղային ռեկուպերատոր, ջրատաքացուցիչի ջրի մատակարարման հանգույցով, ավտոմատ համակարգով Ստ=10կՎտ H=600Պա չափ. 3320x950x1220(հ)մմ	2
4	Ներածում-արտածում թիթեղային ռեկուպերատորով Zilon ZPVP- 450 PE տիպի էլեկտրական սնուցումով H=550Պա չափ. 1050x675x275(հ)մմ	2
5	Կանալային օդամուղ Vents TT150 H=200Պա	2
6	Կանալային օդամուղ Vents TT125 H=50Պա	2
7	Կանալային օդամուղ Vents TT100 H=50Պա	2
8	Առանցքային օդամուղ Vents OV1 200 H=70Պա	2
9	Առանցքային օդամուղ Vents 125PF H=55Պա	2
10	Առանցքային օդամուղ Vents 100PF H=35Պա	2
11	Ներածման-արտածման թիթեղային ռեկուպերատոր Zilon ZPVP- 1500 PE տիպի էլեկտրական սնուցումով H=650Պա Նոդատաք.=9.7կՎտ Նոդամուղ=0.72կՎտ չափ. 2052x1362x550(հ)մմ	2
12	Ներածման-արտածման թիթեղային ռեկուպերատոր Zilon ZPVP- 1000 PE տիպի էլեկտրական սնուցումով H=550Պա Նոդատաք.=6,0կՎտ Նոդամուղ=0.7կՎտ չափ. 1580x1015x500(հ)մմ	2
13	Ներածման-արտածման թիթեղային ռեկուպերատոր Zilon ZPVP- 450 PE տիպի էլեկտրական սնուցումով H=550Պա Նոդատաք.=3,28կՎտ Նոդամուղ=0.52կՎտ չափ. 1050x675x275(հ)մմ	2
14	Ներածման տեղակայում SAU 200 C3 տիպի էլեկտրական սնուցումով H=200Պա Նոդատաք.=4.4կՎտ Նոդամուղ=0.16կՎտ չափ. 1000x486x352(հ)մմ	2
15	Ներածման տեղակայում SAU 125 C տիպի էլեկտրական սնուցումով H=120Պա Նոդատաք.=2.0կՎտ Նոդամուղ=0.11կՎտ չափ. 760x319x255(հ)մմ	2
16	Կենտրոնախոյս օդամուղ Vents VS 600/280-355-4E N=0.245կՎտ, H=250Պա	2
17	Կենտրոնախոյս օդամուղ Vents VS 500/250-280-4E N=0.078կՎտ, H=200Պա	2
18	Կանալային օդամուղ Vents TT125 H=50Պա N=0.038կՎտ, H=50Պա	2
19	Կանալային օդամուղ Vents TT100 H=50Պա N=0.025կՎտ, H=50Պա	2
20	Առանցքային օդամուղ Vents 100PF N=0.014կՎտ, H=35Պա	2

21	Առանցքային օդամուղ Vents 125PF H=55Պա N=0.016կՎտ, H=30Պա	2
22	Օդահովացուցիչ Quawn=7կՎտ CWK	2
23	Օդահովացուցիչի արտաքին բլոկ Quawn=7կՎտ CWK	2
Տեսահսկում		
24	Տեսախցիկ Fixed Dome FHD 30fps (1080p), PoE	1
25	Տեսախցիկ արտաքին տեղակայման FHD 30fps (1080p), PoE	1
Վերելակներ		
26	Վերելակ չժանգոտվող պողպատից 2000x1750մմ չափերի, 1600կգ բեռնատարողությամբ, 21 անձի համար	5
27	Վերելակ չժանգոտվող պողպատից 1400x2400մմ չափերի, 1000կգ բեռնատարողությամբ, 13 անձի համար	5
ԿԱԹՍԱՑԱՏՈՒՆ		
28	Ավտոմատացված ջրային կաթսա ECOMAX /համարժեք/ Q=846 կՎտ (727560կկալ /ժամ) ջերմարտադրողականությամբ	2
29	Ավտոմատացված գազի այրիչ Q=846 կՎտ	2
30	Ջեռուցման համակարգի պոմպ Pedrollo /համարժեք/ F50/125AG=60մ /ժամ, H=16.8մ	2
31	Տաք ջրամատակարարման համակարգի պոմպ Pedrollo /համարժեք/ F50125A G=30մ/ժամ, H=23մ	1
32	Հեղուկ վառելիքի պոմպ ՍՓ 0.8-25-0.58/25 Ե3 G=0.45մ3//час H=20կր/սմ2/ ռн двигателем 4AX80A-4 N=1.1кВт n=1420об/мин	1
33	Տաք ջրի շրջանառության պոմպեր N=1.5կՎտ, G=6մ3/ժամ, H=25մ մոնտաժային կոմպլեկտով	1
Մաքրման կայան		
34	Կենցաղային կեղտաջրերի մաքրման աերացիոն կայանի՝ FBR-110մ3/օր : Մաքրման կայան (Հզորություն-110մ3/օր, պիկային հիդրավիկ ծանրաբեռնվածություն-274մ3, պիկային աղտոտվածություն- 140մ3- 1 ամիս, հոսանքի ծախս- 7.5 կՎտ/ժամ)	1
Արտաքին կոյուղի		
35	Լոկալ մաքրման կայան AFBR 110	15 /էլ. սարքերի մատով 1 տարի երաշխիք/
Արեային ջրատաքացուցիչ համակարգ		
36	Արեային հարթ /FLAT PLATE/ կոլեկտոր, 3մ2	10
37	Շրջանառու պոմպ G=3.0մա/ժ H=8,0մ N=300Ետ	1
Արեային Ֆոտովոլտայիկ կայան		
38	ՖՎՎ380 Վտ, միաբյուրեղ	10
39	Ցանցային կերպափոխիչ 55 կՎտ, (Պաշտպանվածություն՝ DC և AC մուտքերի գերլարումներից, գերբեռնվածության, Մ30, հակատակ քլետայնություն, մեկուսացման հսկում, RS485, USB ինտերֆեյս, LED էկրան, -25'...+60°C աշխատանքային ջերմաստիճան, IP65, EN / IEC 62109-1, EN / IEC 62109-2)	5

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն
 Կառավարության տուն 3
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ՝ 900011037414
 ՀՎՀՀ՝ 02507171

ԿԱՏԱՐՈՂ

«Հուսալի Կամար» ՍՊԸ
 ք. Սիսիան, գ. Տոլորս
 «Հայրիզնեսքանկ» ՓԲԸ
 Հ/Հ՝ 11500990378803
 ՀՎՀՀ՝ 09811047

Գլխավոր քարտուղար՝ Վ. Գրիգորյան

Տնօրեն Վ. Առաքելյան

(Handwritten signature)

(Handwritten signature)

/ստորագրություն/

/ստորագրություն/
 Վ.Տ

